



**Հայաստանում վեթինգի
և անցումային արդարադատության վերաբերյալ
մասնագիտական քննարկման արդյունքում ձևավորված հարցեր**

1. Ինչո՞վ է պայմանավորված անցումային արդարադատության անհրաժեշտությունը Հայաստանում: Անհրաժեշտ են փաստերի վրա հիմնված հիմնավորումներ.

ա. Արդյո՞ք Հայաստանը հետկոնֆլիկտային պետություն է (քաղաքացիական պատերազմ, ապստամբություններ):

բ. Արդյո՞ք Հայաստանը հետխորհրդային շրջանում ռեպրեսիվ պետություն է: Եթե այո, ապա հետխորհրդային ժամանակաշրջանի հատկապես ո՞ր շրջանում: Մարդու իրավունքների ի՞նչ խախտումներ են փաստագրված նշված ժամանակահատվածում: Ի՞նչ աղբյուրների հիման վրա է Հայաստանը որակվում որպես ռեպրեսիվ պետություն: Ի՞նչ աղբյուրների հիման վրա են մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հետևություններն արվում:

գ. Արդյոք ռեպրեսիվ որակված որևէ պետություն կարողացե՞լ է անդամագրվել Եվրոպայի խորհրդին: Եթե այո, ո՞ր պետություններն են, և ի՞նչ ընթացակարգերով է դա հնարավոր եղել: Կան պետություններ, որոնք Եվրոպայի խորհրդին անդամագրվելուց հետո դարձել են ռեպրեսիվ, սակայն Եվրոպայի խորհուրդը չի հակազդել դրան: Եթե այո, որո՞նք են դրանք, և ո՞ր կանոնների հիման վրա է դա հնարավոր եղել:

դ. Ովքե՞ր են ռեպրեսիայի զոհերը, և ինչպե՞ս (ի՞նչ սկզբունքով) են նրանք ընտրվելու, ովքե՞ր պետք է ռեպրիլիտացիայի ենթարկվեն և ի՞նչ մեխանիզմով:

Ե. Միջազգային և տարածաշրջանային ի՞նչ մարմիններ կան, որոնք կոչված են արձագանքելու մարդու իրավունքների լուրջ, կոպտագույն, զանգվածային և պարբերական խախտումներին: Արդյո՞ք նշված մարմինները անդրադարձել են հետխորհրդային «ավտորիտար» Հայաստանում տեղի ունեցող խախտումներին: Եթե այո, ինչպե՞ս են բնութագրել այդ խախտումները, ի՞նչ ընթացակարգեր են կիրառել և ի՞նչ հետևություններ են արել: Եթե ոչ, ինչպե՞ս է միջազգային հանրության «անգործությունը» բացատրվում¹:

2. Կա՞ր արդյոք որևէ ուսումնասիրություն, թե ի՞նչ ակնկալիքներ ունի Հայաստանի ժողովուրդն անցումային արդարադատությունից՝ ճշմարտության վերականգնում, հանրային համերաշխության հաստատում, թե՛ փոխհատուցում: Եթե նման ուսումնասիրություն առկա է, ապա ըստ դրա արդյունքների՝ ինչպե՞ս է իրագործվելու ժողովրդի ակնկալիքը:

3. Որո՞նք են լինելու անցումային արդարադատության արդյունքները և դրանց գնահատման չափելի չափորոշիչները: Ի՞նչ ժամանակահատվածում է ակնկալվում հասնել շոշափելի արդյունքների:

4. Հայկական անցումային արդարադատությունը քաղաքական և քաղաքացիական իրավունքներից զատ ընդգրկելո՞ւ է արդյոք սոցիալական և տնտեսական իրավունքները: Եթե այո, ապա ինչպե՞ս: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:

5. Ո՞րն է վեթինգի իրականացման անհրաժեշտությունը և նպատակը Հայաստանում: ԵՄ կողմից Հայաստանում 2017 թվականին իրականացված արդարադատության մոնիթորինգ ծրագրի արդյունքերը, ըստ դեսպան Սվիտալսկու, վկայեցին այն մասին, որ դատարանների նկատմամբ վստահությունը թեև շատ բարձր չէ, սակայն ավելի բարձր է, քան որոշ եվրոպական երկրներում: Այս պարագայում արդյոք ի՞նչն է հիմք ընդունվել վեթինգ անցկացնելու որոշումը կայացնելու համար: Վկայակոչվող CEPEJ ցուցանիշներով Հայաստանը ո՞ր երկրների հետ է համեմատելի անվստահության

¹ Հարկ է արձանագրել, որ ՄԻԵԴ-ը Հայաստանի Հանրապետության դեմ երբևէ չի արձանագրել Կոնվենցիայի 34-րդ հոդվածի խախտում: 34-րդ հոդվածը սահմանում է անհատական գանգատ ներկայացնելու իրավունքը և այն իրացնելուն չխոչընդոտելու՝ անդամ պետության պոզիտիվ պարտականությունը: Այսինքն, եթե պետությունը ենթադրաբար եղել է ռեպրեսիվ, և տեղի են ունեցել մարդու իրավունքների զանգվածային խախտումներ, ապա այդ պետությունը գրեթե անհնարին է, որ չխախտեր Կոնվենցիայի 34-րդ հոդվածը:

մակարդակով, արդյոք ո՞ր սուբյեկտների անվստահությունն է հիմք ընդունվել (փաստաբանական համայնքի՞, իրավաբանական համայնքի՞, ուղղակի քաղաքացիների՞, թե՛ այն քաղաքացիների, ովքեր օգտվել են ծառայությունից):

6. Կա՞ դատավորների կողմից թույլ տրված խախտումների վերաբերյալ այնպիսի վիճակագրություն, որը կարող է ծառայել որպես օբյեկտիվ հիմք վեթինգի իրականացման անհրաժեշտության համար:

7. Որո՞նք են գործող կարգավորումների այն թերությունները, որոնք առաջացնում են վեթինգի անխուսափելի անհրաժեշտություն: Արդյոք առկա խնդիրները հնարավոր չէ լուծել դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները կատարելագործելու և Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի ողջ ներուժն արդյունավետ օգտագործելու ճանապարհով: Որո՞նք են վեթինգի առավելությունները՝ մեր օրենսդրությամբ սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցների համեմատ:

8. Կա՞ն արդյոք այլընտրանքներ վեթինգին. այս առումով միջազգային փորձը դիտարկվե՞լ է, և ի՞նչ վերլուծություններ են առկա: Ինչու՞ վեթինգը չի դիտարկվում որպես վերջին հանգրվան, ինչպես խորհուրդ է տրվում մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից:

9. Որո՞նք են ընդհանրությունները վեթինգ իրականացրած երկրների (Ալբանիա և այլ պետություններ) և Հայաստանի միջև, և որոնք են տարբերությունները:

10. Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների դատական համակարգերի վերաբերյալ եվրոպական զեկույցների համաձայն՝ Հայաստանի ցուցանիշների հետ համադրելի կամ ավելի վատ ցուցանիշ ունեցող ո՞ր երկրներում է իրականացվել վեթինգ և ինչպիսի՞ արդյունքներ են արձանագրվել:

11. Գնահատվե՞լ են արդյոք վեթինգի ռիսկերը: Եթե այո, ապա որո՞նք են դրանք և դրանց հաղթահարման պլանավորված միջոցները:

12. Ի՞նչ մեխանիզմներ են կիրառվելու, որպեսզի ապահովվեն դատարանների բնականոն գործունեությունն ու արդարադատության մատչելիությունը վեթինգի իրականացման ժամանակահատվածում:

13. Եթե վեթինգը կիրառվում է, ապա այն միշտ դիտարկվում է դատաիրավական ոլորտում բարեփոխումների հետ փոխկապակցված: Արդյոք մշակվա՞ծ է վեթինգին

զուգահեռ իրականացվելիք դատաիրավական ոլորտում բարեփոխումների համալիր ծրագիր: Եթե այո, ապա ժամանակային առումով այն սինխրոնիզացվա՞ծ է վեթինգի շրջանակներում իրականացվող գործընթացներին:

14. Որո՞նք են այն մարմինները և պաշտոնատար անձիք, ովքեր ենթարկվելու են վեթինգի: Հայտարարվել է դատավորների վեթինգի մասին. դա նշանակու՞մ է արդյոք, որ, ի տարբերություն վեթինգ իրականացրած այլ երկրների, օրինակ՝ դատախազները վեթինգի չպետք է ենթարկվեն: Եթե այո, ապա ի՞նչ հիմնավորումներ կան վեթինգը միայն դատավորների վրա տարածելու համար:

15. Պաշտոնավարման ո՞ր ժամանակահատվածի վրա պետք է տարածվի վեթինգը, և ի՞նչ հիմքերով է ընտրված տվյալ ժամանակահատվածը:

16. Արդյո՞ք Սահմանադրական դատարանի դատավորները նույնպես պետք է ենթարկվեն վեթինգի: Եթե պատասխանն այո է, ապա ինչպե՞ս են վեթինգի իրագործումը և վեթինգի մասին օրենքը անհրաժեշտության դեպքում վիճարկվելու Սահմանադրական դատարանում, քանի որ կստացվի, որ դատավորներն ունեն շահերի բախում: Եթե Սահմանադրական դատարան հնարավոր չի լինելու բողոքարկել, ապա ո՞ր մարմինն է լուծելու օրենքի և պրակտիկայի սահմանադրականության հարցը և իրավական ի՞նչ կարգավորումների հիման վրա:

17. Արդյոք նախատեսվելո՞ւ են վեթինգի գործընթացի արտաքին մոնիթորինգի և վերահսկողության մեխանիզմներ: Ինչպիսի՞ն կլինի միջազգային կազմակերպությունների դերը վեթինգի իրականացման գործում, ո՞ր միջազգային կազմակերպությունները, ի՞նչ ձևով պետք է ներգրավվեն գործընթացին:

18. Ինչպե՞ս են ընտրվելու վեթինգ իրականացնող պաշտոնյաները: Որո՞նք են մեխանիզմները, որոնք կապահովեն իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքը վեթինգի ընթացքում՝ (հատկապես հաշվի առնելով, որ մենք ունենք օրենսդիր իշխանություն, որն ակնհայտորեն կատարում է գործադիր իշխանության ցանկացած պահանջ):

19. Արդյո՞ք վեթինգի իրականացման համար պատասխանատու մարմինները և պաշտոնատար անձինք իրենք էլ վեթինգի ենթարկվելո՞ւ են, թե՛ ոչ:

20. Ի՞նչ կանխարգելիչ մեխանիզմներ են նախատեսվում, որպեսզի վեթինգը չվերածվի ընտրովի արդարադատության կամ «վիուկների որսի»:

21. Հնարավոր է արդյոք (ի՞նչ մեխանիզմներով), հիմնվելով վեթինգի երեք չափանիշների վրա, իրականացնել որոշ դատավորների պաշտոնանկություն՝ առանց Սահմանադրության 7-րդ գլխի փոփոխման, միաժամանակ չխախտելով Սահմանադրությունը:

22. Ինչ վերաբերում է ստուգման առաջարկվող երեք բաղադրիչներին (գույքի ու եկամուտների գնահատում, քաղաքական ու հանցավոր աշխարհի հետ կապեր, մասնագիտական հմտություններ).

ա. Գույքի և եկամուտների գնահատումը գոյություն ունեցող կարգավորումներից ինչո՞վ է տարբերվելու, ինչո՞վ է թերի գործող մեխանիզմը:

բ. Ի՞նչ չափանիշներով են գնահատվելու քաղաքական կապերը և, մասնավորապես, ո՞ւմ հետ քաղաքական կապերն են բացասական գնահատվելու: Օրինակ՝ Ալբանիայում գնահատվում են միայն կազմակերպված հանցագործության մեջ ներգրավված անձանց հետ կապերը:

գ. Ի՞նչը պետք է հաշվի առնվի Հայաստանի պարագայում: «Կապեր» ասելով ի՞նչ նկատի ունենք: Ո՞րն է լինելու «կապերի» սահմանումը: Որո՞նք են լինելու գնահատման չափանիշները, այսինքն ո՞ր վարքագիծը պետք է համարվի անընդունելի, և ո՞րը պետք է լինի շեմը:

դ. Եթե վեթինգի ընթացքում պետք է ուսումնասիրվեն նաև դատավորի նախկին քաղաքական կապերը, ապա արդյո՞ք նախկին բարձրաստիճան պաշտոնյաների վերաբերյալ կան փաստեր կամ համոզմունք, որոնք օբյեկտիվորեն վկայում են նրանց՝ կազմակերպված հանցավորության մեջ ներգրավված լինելու մասին: Եթե այո, ապա որո՞նք են դրանք:

ե. Ի՞նչ կառուցակարգեր են մշակվելու, որպեսզի գույքի և եկամուտների գնահատման և կապերի ստուգման ընթացքում երաշխավորվի տեղեկատվության՝ ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխան մշակումը:

զ. Ինչպե՞ս են ապահովվելու անձնական կյանքի գաղտնիության պահպանման սահմանադրական պահանջները:

է. Ո՞վ է անցկացնելու մասնագիտական կարողությունների գնահատումը և ինչպե՞ս են այդ գնահատողներն ընտրվելու: Որո՞նք են լինելու գնահատման չափանիշները:

ը. Ինչպե՞ս պետք է իրագործվեն այդ երեք չափանիշները՝ առանձին-առանձի՞ն, թե՛ բոլորը միասին: Եթե առանձին-առանձին, ապա ո՞րն է լինելու յուրաքանչյուր դեպքի հետևանքները (օրինակ՝ մասնագիտական կարողությունների գնահատման վատ արդյունքների դեպքում անձը պետք է ազատվի՞ պաշտոնից, թե՛ պարտադիր դասընթացներ անցնի):

23. Ո՞րոնք են լինելու վեթինգի ընթացակարգի թափանցիկության ապահովման մեխանիզմները:

24. Ինչպե՞ս պետք է ապահովվի վեթինգ իրականացնող մարմինների հաշվետվողականությունը և ապաքաղաքականացվածությունը:

25. Ի՞նչ երաշխիքներ են նախատեսվում, որպեսզի առերևույթ քաղաքական զգայուն դատավարությունների դեպքում վեթինգը չազդի դատավորների անկախության վրա: Արդյո՞ք կկատարվեն այն գործերը, որոնք ունեն քաղաքական ենթատեքստ՝ ապահովելու համար Հայաստանի ժողովրդի վստահությունը նշված գործերի շրջանակում կայացված որոշումների անաչառության նկատմամբ:

26. Որո՞նք են լինելու վեթինգի ենթարկվող պաշտոնյայի դատավարական և այլ հիմնարար իրավունքների պաշտպանության երաշխիքները:

27. Ըստ Սահմանադրության 73-րդ հոդվածի՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Ինչպե՞ս է ապահովվելու տվյալ սկզբունքը վեթինգն իրականացնելիս՝ առանց խեղաթյուրելու այդ սկզբունքն ամրագրող սահմանադրական դրույթի էությունը:

28. Ինչպե՞ս է ապահովվելու խտրականության բացառման սկզբունքը վեթինգի իրականացման ընթացքում:

29. Ինչպե՞ս է բաշխվելու ապացուցման բեռը վեթինգ իրականացնող մարմնի և վեթինգի ենթարկվող դատավորի միջև:

30. Ի՞նչ ընթացակարգով են կայացվելու կոնկրետ դատավորի վերաբերյալ որոշումները (գրավո՞ր, բանավո՞ր ընթացակարգ, թե՛ երկուսն էլ) և ու՞մ կողմից (հաշվի առնելով, որ կան երեք գնահատվող չափանիշներ): Ինչպիսի՞ որոշումներ կարող են ընդունվել վեթինգի արդյունքում (օրինակ՝ պաշտոնանկություն, պաշտոնավարման շարունակում, կարգապահական միջոցներ, վերապատրաստում):

31. Ի՞նչն է հիմք հանդիսանալու պաշտոնանկության վերաբերյալ որոշման համար:

32. Արդյոք ընդունված որոշումները լինելո՞ւ են բողոքարկելի, և ի՞նչ ընթացակարգով են բողոքարկվելու:

33. Ի՞նչ պատիժ է նախատեսվելու ենթադրյալ «մեղավորների» համար (բացի պաշտոնանկությունից): Արդյո՞ք բացասական վեթինգը ինքնին դիտվելու է որպես բավարար ապացույց (փաստ) տվյալ դատավորին հետագայում մեղավոր ճանաչելու համար: Եթե այո, ապա ինչպիսի՞ն են հնարավոր դատավարական երաշխիքները:

34. Ի՞նչ է տեղի ունենալու հեռացված դատավորների կողմից ընդունված որոշումների հետ, և արդյոք գնահատվե՞լ է իրավական անվտանգությունն այս համատեքստում:

35. Ինչպե՞ս և ովքե՞ր են փոխարինելու պաշտոնանկ եղած դատավորներին:

36. Ո՞րն է մոտավոր հաշվարկված բյուջեն, և որտեղի՞ց է գումարը: Կարո՞ղ է արդյոք ֆինանսավորման աղբյուրը ազդել գործընթացի անաչառության վրա և ու՞մ կողմից, ինչպե՞ս է այդ ռիսկը գնահատվել:

37. Արդյոք պետությունը ունի՞ր բավականաչափ ռեսուրսներ (մարդկային, նյութական, գիտելիքների, տեխնիկական և այլ) վեթինգի իրականացման և հետվեթինգային շրջանի համար:

38. Որո՞նք ենք նախապես պլանավորված և մշակված այն չափելի մեխանիզմները, որոնք թույլ կտան շարունակաբար գնահատել վեթինգի արդյունքները հետվեթինգային շրջանում՝ հասկանալու համար, թե որքանով է հաջողվել հասնել համակարգի բարեփոխման նպատակներին, արդյոք համակարգը իրականում բարեփոխվե՞լ է, թե՞ ընդհակառակը:

39. Վեթինգ իրականացնող պաշտոնյաների կողմից ոչ անաչառ մոտեցում ցուցաբերելու, ոչ իրավաչափ և ոչ հիմնավորված որոշում կայացնելու համար ի՞նչ պատասխանատվության միջոցներ են նախատեսվում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ՝

- | | |
|-----------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Դավիթ Հարությունյան
Երվանդ Բոզոյան | <ul style="list-style-type: none"> - «ԼՈՒՅՍ» հիմնադրամի տնօրեն - «Դիալոգ» հայկական փորձագիտական կենտրոնի նախագահ |
| Արա Ջոհրաբյան
Անդրանիկ Թևանյան | <ul style="list-style-type: none"> - ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ - «Պոլիտէկոնոմիա» հետազոտական ինստիտուտի տնօրեն |
| Արփինե Հովհաննիսյան | <ul style="list-style-type: none"> - «Իրավական կրթություն և վերահսկողություն» ՀԿ նախագահ |
| Վահե Հովհաննիսյան | <ul style="list-style-type: none"> - «Այլընտրանքային նախագծեր խումբ» հասարակական կառույցի ղեկավար |
| Ռուբեն Մելիքյան
Սիրանուշ Սահակյան | <ul style="list-style-type: none"> - «Իրավական ուղի» ՀԿ համահիմնադիր - «Իրավական ուղի» ՀԿ համահիմնադիր |

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: